լսէր: Օրինակ, եթէ նրան հայհոյանք տայիր, չէր լսի, իսկ եթէ ասէիր. «հաջի, համեցէք, մի ֆինջան ղահուէ անուշ արեք», իսկոյն վազ կը տար:

— Հաջի, մի շոր ձգիր այստեղ, որ վրան նստենք, — եղաւ մեր առաջին պահանջը:

Նա չլսեց: Ես բռնեցի նրա ձեռքից եւ, յատակը ցոյց տալով, բարձր ձայնով ասացի,

— Շո՛ր, շո՛ր բեր:

Նա մրթմրթալով հեռացաւ, բայց շորի փոխարէն մի աւել բերեց եւ սկսեց յատակը աւլել: Այդ աւելի հարկաւոր էր, մենք այդ մասին չէինք մտածել, որովհետեւ հաջիի նշանաւոր յաճախորդներից՝ ով որ եկել էր, ով որ գնացել էր, իր հետքերը թողել էր յատակի վրայ: Այստեղ ընկած էին ձմերուկի բորբոսած կեղեւներ, խաղողի չանչեր, մսի ոսկորներ, չոր հացի կտորներ, կիսավառ մոմի պատառներ, որ աշտանակի փոխարէն կպցրած էին աղիւսի վրայ, եւ եթէ աւելացնենք նրանց հետ հաջիի կեղտոտ ֆէսը, որ կռանալու եւ աւլելու միջոցին ընկաւ յատակի վրայ, կարելի էր այդ սենեակը կատարեալ աղբանոց համարել:

Երբ հաջին վերջացրեց իր աշխատանքը, մենք յայտնեցինք նրան մեր երկրորդ պահանջը, ասելով, որ լոացոելու ջուր բերէ: Նա դարձեալ չլսեց: Ինձ մնում էր երկրորդ անգամ բռնել նրա ձեռքից եւ աղաղակել. «ջո՛ւր, ջուրէ՛: Նա իբր ոչինչ չհասկացաւ: Հարկաւոր էր նշաններով հասկացնել, թէ ինչի համար էր ջուրը: Ես ձեռքս տարայ դէպի երեսս եւ լոացոելու ձեւեր ցոյց տոի: Նա էլ ձեռքը տարաւ դէպի պանդոկի բակը եւ ցոյց տոեց ջրի աւազանը, որի մէջ պղնձէ ծորակից ցած էր վազում ջուրը:

Դժոար է որոշել, մե՞նք աւելի ծիծաղելի էինք երեւում հաջիի աչքում, թէ՞ նա՝ մեզ: Կարծեմ, մենք աւելի ծիծաղելի էինք երեւում: Երեւի, նա մտածում էր, այդ ինչ տեսակ ճանապարհորդներ են, որ ոչ ջրի աման ունեն եւ ոչ մի կապերտի կտոր:

Ես համբերութիւնս կորցրի, նրա դանդաղկոտութիւնը աւելի վրդովեցրեց ինձ. բռնեցի երկար ականջներից եւ, սաստիկ թափ տալով, գոչեցի.

— Գնա՛յ ջուր եւ օթոց բե՛ր, լսո՞ւմ ես:

Հաջին զգաստացաւ եւ շտապելով դէպի ցած վազեց: Բայց իմ վարմունքը դուր չեկաւ Ասլանին:

— Ի՞նչ պէտք է արած, — պատասխանեցի ես, — այդ մարդիկ խնդրելու չեն սովորած. նրանց պէտք էհրամայել եւ մտրակով հրամայել...